ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ-10/6-1

ք. Երևան 27 մարտի 2017 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Գրիգոր Այվազյանը, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում. որում դրամական միջոցները նախատեսված են, բայց ոչ ուշ, քան 2017թ. դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Գրիգոր Այվազյան ԱՁ
ք. Երևան Բագրևանդի 5	Արարատի մարզ գ. Ոստան, Թեհլերյան 14
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արտաշատ մ/ճ
Հ/Հ 900011117034	Հ/Հ 20515320553410001
ՀՎՀՀ 02703824	ՀՎՀՀ 84485538
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն՝ ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Գ. ԱՅՎԱԶՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԾՁԲ-10/6-1 պայմանագրի

Հ/հ	Ծառայության անվանում	Ընդհանուր առավելագույն գին/դրամ/	Գնման ժամանակացույց
1	**Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ**	3 000 000	Ծառայությունները իրականացվում են յուրաքանչյուր ամիս, իսկ անհրաժեշտության դեպքում ԿՇ հայտերի հիման վրա: Ծառայությունները մատուցվում են 2017թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների ընթացքում բայց ոչ ուշ, քան 20.12.2017թ

Ծառայության անվանում և տեխնիկական բնութագիր		Չ/մ	Առաջարկվող միավոր գին/դրամ/
APD 400 KVA 5 հատ և AC 100 KVA 2 հատ Դիզել-գեներատորների տարեկան տեխնիկական սպասարկում և շահագործում: **Դիզելային գեներատորները գործարկում են ամեն շաբաթը մեկ անգամ՝ 15 րոպե տևողությանբ, համաձայն սարքերի տեխնիկական անձնագրերի պահանջների:**			
Աշխատանքի ընթացքում դիզելային շարժիչի աղմուկի մակարդակի ստուգում, կարգաբերում	Աշխատանքի ընթացքում դիզելային շարժիչի աղմուկի մակարդակի ստուգում, կարգաբերում	1 անգամ	250
Շարժիչի յուղի մակարդակի ստուգում	Նախքան շարժիչի գործարկելը անհրաժեշտ է ստուգել շարժիչի յուղի մակարդակը	1 անգամ	150
Շարժիչի աշխատանքի ընթացքում յուղի ճնշման ստուգում	Շարժիչի աշխատանքի ընթացքում ստուգվում է յուղի ճնշումը՝ անբավարար լինելու դեպքում դադարեցվում է այն՝ միջոցներ ձեռնարկելու համար	1 անգամ	250
Ջրի (անտիֆրիզի) մակարդակի ստուգում և ըստ անհրաժեշտության՝ ավելացում (առանց դրա գնի)	Նախքան շարժիչի գործարկելը անհրաժեշտ է ստուգել շարժիչի ջրի (անտիֆրիզի) մակարդակը՝ հովացման համակարգի ճիշտ աշխատանքն ապահովելու համար:	1 անգամ	250
Ջրի (անտիֆրիզի) ջերմաստիճանի ստուգում և կարգավորում	Նախքան կայանի գործարկելը և դրանից հետո անհրաժեշտ է ստուգել շարժիչի ջրի (անտիֆրիզի) ջերմաստիճանը, որպեսզի վառելիքի այրումը կատարվի լիարժեք:	1 անգամ	250
Ջրի տաքացուցիչի աշխատանքի ստուգում	Ջրի տաքացուցիչի աշխատանքի ստուգումն իրականացվում է մինչև կայանը գործարկելը՝ անհրաժեշտության դեպքում կատարվում է կարգաբերում, որպեսզի շարժիչում ապահովվի համապատասխան ջերմաստիճան:	1 անգամ	150

Ջրի հովացուցիչի աշխատանքի ստուգում	Մինչ կայանի գործարկելը ստուգվում է ջրի հովացուցիչը՝ թևիկների ամրությունը և հուսալիությունը:	1 անգամ	150
Զտիչների յուրաքանչյուր միավորի ստուգում և մաքրում	Մինչ կայանի գործարկելը ստուգվում է զտիչները, անհրաժեշտության դեպքում մաքրվում են՝ շարժիչի կանոնավոր աշխատանքն ապահովելու համար:	1 անգամ	250
Վառելիքի մակարդակի ստուգում՝ այդ թվում մեխանիկական եղանակով	Մինչ կայանի գործարկելը ստուգվում է վառելիքի մակարդակը՝ շարժիչի անդադար աշխատանքն ապահովելու համար:	1 անգամ	250
Մարտկոցի լարումների և միացման տեղերի ամրության ստուգում	Մինչ կայանի գործարկումը ստուգվում է մարտկոցի լարումները, միացման տեղերի ամրությունը, լիցքավորման սարքի աշխատանքը, դիզելային էլ. կայանի ավտոմատ գործարկումն ապահովելու համար:	1 անգամ	250
Շարժիչի աշխատանքի ընթացքում ջրի (անտիֆրիզի), վառելիքի և յուղի արտահոսքի առկայության ստուգում	Ստուգվում է շարժիչի աշխատանքի ընթացքում ջրի (անտիֆրիզի), վառելիքի և յուղի արտահոսքի առկայությանը՝ նկատվելիս անհրաժեշտ է վերացնել:	1 անգամ	150
Հեղյուսա-մանեկային միացումների ստուգում	Մինչ կայանի գործարկումը ստուգվում է հեղյուսա-մանեկային միացումները անվտանգ աշխատանքն ապահովելու համար, ինչպես նաև բացառելու համար վիբրացիայի և աղմուկի ուժեղացումը:	1 անգամ	400
Վթարային անջատիչի աշխատանքի և ազդանշանի ստուգում	Ստուգվում է վթարային անջատիչի աշխատանքը և ազդանշանը, անհրաժեշտության դեպքում շարժիչի աշխատանքը դադարեցնելու համար:	1 անգամ	250
Շարժիչի աշխատանքի ընթացքում պտտման արագության ստուգում	Շարժիչի աշխատանքի ընթացքում պտտման արագության ստուգումն իրականացվում է գեներատորի կանոնավոր աշխատանքն ապահովելու համար:	1 անգամ	400
Նույն ժամանակում գեներատորի արտադրած էլ. էներգիայի հաճախականության ստուգում	Նույն ժամանակում ստուգվում է գեներատորի արտադրած էլ. էներգիայի հաճախականությանը՝ համապատասխանությունն ապահովելու համար:	1 անգամ	400
Նույն ժամանակում միջֆազային լարումների ստուգում	Նույն ժամանակում ստուգվում է միջֆազային լարումները՝ համապատասխանությունն ապահովելու համար:	1 անգամ	400
Նույն ժամանակում ֆազային լարումների ստուգում	Նույն ժամանակում ստուգվում է ֆազային լարումները՝ համապատասխանությունն ապահովելու համար:	1 անգամ	400
Նույն ժամանակում բեռնվածության ստուգում	Նույն ժամանակում ստուգվում է բեռնվածությունը անխափան աշխատանքն ապահովելու համար:	1 անգամ	400
Ռևերսային ավտոմատ անջատիչի աշխատանքի ստուգում և կարգաբերում՝ ցանց-սպառիչ, գեներատոր-սպառիչ ռեժիմներում	Ռևերսային ավտոմատ անջատիչի աշխատանքի ստուգում և կարգաբերում՝ ցանց-սպառիչ, գեներատոր-սպառիչ ռեժիմներում	1 անգամ	1100
Հողանցման համակարգի ստուգում և ամրացում	Ստուգվում է հողանցման համակարգի միացման կետերը և անհրաժեշտության դեպքում դրանք ամրացնել:	1 անգամ	400
Թրթռամեղմացուցիչների ստուգում	Ստուգվում են թրթռամեղմացուցիչները և անհրաժեշտության դեպքում կարգաբերվում	1 անգամ	250
Մալուխների և կոնտակտների ստուգում, մաքրում փոշուց և օքսիդային նստվածքից	Մալուխների և կոնտակտների ստուգում, մաքրում փոշուց և օքսիդային նստվածքից	1 անգամ	500
Անտիֆրիզի փոխարինում	Տարին մեկ անգամ ծմեռնամուտին անհրաժեշտ է փոխարինել անտիֆրիզը:	1 անգամ	2500

Դիզելային շարժիչների փոկային միացումների ամրության ստուգում և ըստ անհրաժեշտության փոխարինում (առանց փոկի արժեքի)	Ստուգվում են դիզելային շարժիչների փոկային միացումների ամրությունը և ըստ անհրաժեշտության փոխարինում (առանց փոկի արժեքի)	1 անգամ	500
Ռետինե խողովակների (ջրի, վառելիքի) կամ ջերմային կարգավորիչով յուղի էլեկտրական տաքացուցիչի կամ ցուցիչների կամ տվիչների կամ զտիչների յուրաքանչյուր միավորի փոխարինում (առանց դրանց արժեքի)	Ռետինե խողովակների (ջրի, վառելիքի) կամ ջերմային կարգավորիչով յուղի էլեկտրական տաքացուցիչի կամ ցուցիչների կամ տվիչների կամ զտիչների յուրաքանչյուր միավորի փոխարինում (առանց դրանց արժեքի)	1 անգամ	500
Ավտոմատ ռեվերսիվային կոնտակտորների աշխատանքի ստուգում	Կայանի աշխատանքի ժամանակ ստուգվում է ավտոմատ ռեվերսային անջատիչի աշխատանքը՝ ցանց-սպառիչ, գեներատոր-սպառիչ, սպառիչների էլ. սնուցումն անխափան ապահովելու համար:	1 անգամ	250
Վառելիքը փոշիացնող սարքի (ինժեկտորի) աշխատանքի ստուգում	Ստուգվում է վառելիքը փոշիացնող սարքի (ինժեկտորի) աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կարգաբերվում:	1 անգամ	400
Վառելիքի պոմպի աշխատանքի ստուգում	Ստուգվում է վառելիքի պոմպի աշխատանքը՝ կայանի անխափան աշխատանքն ապահովելու համար:	1 անգամ	500
Վառելիքի պոմպի վերանորոգում, կարգաբերում (առանց պահեստամասերի)	Վառելիքի պոմպի վերանորոգում, կարգաբերում (առանց պահեստամասերի)	1 անգամ	4000

Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ծառայություններն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի անվան ՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Անհատ ձեռնարկատեր

Գ. Այվազյան

Հավելված N 2
N ՇՀԾՁԲ-10/6-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ծառայության անվանումը	Ծառայության ընդհանուր առավելագույն գին/դրամ/	CPV'	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., ընդ որում՝								
				Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 25.12.17թ.
1	Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ	3 000 000	50531230/1/4/1	1 050 000	1 050 000	1 050 000	2 250 000	2 250 000	2 250 000	3 000 000	3 000 000	3 000 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի պարտ.

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Անհատ ձեռնարկատեր

Գ. ԱՅՎԱԶՅԱՆ

Հավելված N 3
N ՇՀՇՁԲ-10/6-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՇՀԾՁԲ-10/6-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն